

Գ Ն Ա Հ Ա Ց Ա Ն Ք

ՍԻՈՆ-ի առնականից Տիար Գրիգոր Սարգսեան՝ Ն. Ս. Օձնուրիւն Վազգէն Ա. Կարողիկոսին կողմէ գնահատուած է Ս. Լուսաւորչի Ա. Կարգի շնորհակցով, Բարեգործականի, Հայ Եկեղեցիի եւ Հայ եկեղեցական գրականութեան ի նպաստ երկար ծառայութեան մատուցած իր օգնութեան ծառայութեանց համար:

Շնորհակցութեամբ եւ զայն արժեւորող Կոնգրէսը պատշաճօրէն յանձնուած են իրեն ձեռամբ Գալիթորնիոյ նորինիսի Առաջնորդին, ճաշկերպի մը ընթացքին, որ սարգուած էր Առաջնորդին բարի գալուստ մտաբերու համար, Կիրակի, 4 Նոյեմբեր 1962ին, Ֆրէզնոյի Ս. Պօղոս մայր եկեղեցւոյ նորակառոյց ընկերական սրահին մէջ:

ՍԻՈՆ իր կարգին սրագինս կը շնորհակցէ իր անխնայ առնականիցը իրեն եղած այս գեղեցիկ շնորհին համար, որուն արժանի էր ինքը:

էին մինչեւ ժողովին գումարումը, քուէի իրաւունք ունեցող Միութեան բոլոր իրաւասու անդամներուն կողմէ, նիստին ներկայ եղող բազմաթիւ անդամներու ձայներէն զատ:

Այս կերպով Հ. Բ. Ը. Միութիւնը ունեցաւ զօրեղ նոր կառուցուածք մը, տրամաբանական, բնական ու ներդաշնակ, ուր թէ իրողապէս և թէ իրաւապէս կը հաստատուէր և ցարդ կը պահուէր մէկ կեդրոն, ենթակայ մէկ օրէնսդրութեան և համարատու, ըստ առաջնոյն, Ընդհանուր ժողովին՝ որուն կը մասնակցէին աշխարհի բոլոր անկիւններէն մեր բոլոր իրաւասու անդամները, բոլորն ալ եղբայրական ոգիով իրարու կապուած՝ Միութեան անփոփոխ հիմնական նպատակներուն շուրջ, անխախտ միասնականութեամբ:

Ձուիցերիական Ընկերակցութիւնը ևս պահուեցաւ, միաժամանակ, բայց անշուշտ առնականափակ իրաւասութեամբ ու գործերով, ենթակայ բնականաբար Մայր Ընկերակցութեան, իր կեդրոնով Նիւ Եորքի մէջ, գլխաւորաբար Միջին Արեւելքի և Եւրոպայի կառուածներուն համար, և ի նախատեսութիւն ապագայ որեւէ հաւանականութեան:

Կեդրոնական Վարչութիւնը, վարչական վերին իրաւասու մարմին, ընթացած Ընդհանուր ժողովին և անոր տարուէ տարի համարատու ենթապէս թէ բարոյապէս, կը յանձնէ միաժամանակ թէ Ամերիկեան և թէ Ձուիցերիական Ընկերակցութեանց ենթակայ Հ. Բ. Ը. Միութեան ամբողջական ռապոստաւածքը, ի շահ մեր Միութեան նպատակներուն, այսինքն ի շահ մեր Ազգին:

• • •

Ահա յստակ, ամբողջական և իրական պատկերացումը Միութեան այժմու իրողական և իրաւական կառուցուածքին — իմաստուն, խոհեմ ու հեռատես ուղղութիւն և գործելակերպ՝ Հ. Բ. Ը. Միութեան նման ընդարձակածաւալ մեծ կազմակերպութեան մը համար որ կը գործէ աշխարհի ամէն կողմերը ջրուած հայութեան մը ծոցին մէջ:

Համայն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, իր բազմակողմ անդամներով, բոլոր շրջանակներով և Մասնաճիւղերով, միաձայն է և ճանաչած ու կիրարկած՝ վերոյիշեալ գոյովինակը 1955էն ի վեր:

Եւ Փարիզէն քսնի մը անդամներու բողոքն ու անոր առեւթիւր ապերասան ընթացքը, զոր ծաւալ կ'արձանագրենք, արգիւնք կարգ մը տեսչերու և յաւակնոտ յամառութեանց, Միութեան հանդէպ անշահախնդիր վարմունք մը և շինարար ոգի մը չեն ենթադրեր, ու ամէն պարագայի տակ բան մը չեն փոխեր մեր մեծ կազմակերպութեան բնականոն կացութեան և աշխատանքին մէջ:

Գրիգոր Հ. Բ. Ը. Միութեան
Կեդր. վարչ. ժողովի